



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԼՈՍ ԱՆՁԵԼԸՆԻ ԻՐԱՆԱՐԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ



Երեքաբթի, 6

Սեպտեմբերի յետմիջօրեին,  
Թեմիս բարեհնամ  
Առաջնորդ Բարձր. S.  
Մուշեղ Արք. Մարտիրոսեան  
Ազգային Առաջնորդարանին  
մեջ ընդունեց այցելութիւնը  
Լոս Անձելըսի Իրանահայ  
Միութեան

Ներկայացուցիչներուն՝  
Տեարք Նժեթի Փիրճանեանի  
եւ Թոմիկ Ալեքսանեանի:  
Յանդիպումին ներկայ եղաւ

Ազգ. Կարչութեան ատենապետուիի Տիկին Ռիմա Պողոսեան:

Հիւր Ներկայացուցիչները եկած էին Առաջնորդ Սրբազանին  
հաղորդելու միութեան գործունեութեան կարգ մը մասրամասնութիւնները,  
մանաւանդ, որ աշխատանքը նոր թափ ու ծաւալ ստացած է միութեան  
Նորակերտ կերպոնին բացումեն ետք: Առաջնորդ Սրբազանը գնահատանքով  
արտայայտուեցաւ Իրանահայ Միութեան գործունեութեան մասին, որ  
կ'իրագործուի վարչական պատասխանատուներու թէ անդամներու  
նուիրեալ աշխատանքով:

Յանդիպումը առիթ եղաւ խորհրդակցելու նաեւ Ս. Աթոռոյս գահակալ  
Ս.Ս.Օ.Ս.Ս. Արքամ Ա. Կաթողիկոսի յառաջիկայ հովուապետական  
այցելութեան մասին, Նկատի ունենալով, որ Միութիւնը նախապես փափաք  
յայտնած էր իր նոր կերպոնին մեջ հիւրընկալելու Վեհափառ Յայրապետը եւ  
ստանալու անոր օրինութիւնը: Միութիւնը կը ծրագրէ կազմակերպել  
գեղարուեստական երեկոյթ մը, ապա նաեւ պատշաճ ընդունելութիւն-  
հիւրասիրութիւն:

Առաջնորդ Սրբազանը գոհունակութիւն յայտնեց իրաւերին ու  
նախատեսուած յայտագիրին մասին, ու հաստատեց, որ Յովուապետական

այցելութեան կազմակերպիչ մարմինները ժամանակացոյցին մԵջ նկատի պիտի ունենան միութեան խնդրանքը:

## **PRELATE WELCOMES REPRESENTATIVES FROM THE ARMENIAN SOCIETY OF LOS ANGELES**

On Tuesday, September 6, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives from the Armenian Society of Los Angeles Mr. Njteh Pirjanian and Mr. Tomik Alexanian. Executive Council Chairlady Mrs. Rima Boghossian participated in the meeting.

The representatives had come to the Prelacy to discuss the organization's current activities, which have recently expanded following the completion of their new center.

Also discussed was the upcoming Pontifical Visit of H.H. Catholicos Aram I. The Armenian Society of Los Angeles had previously extended an invitation to welcome His Holiness to their new center and receive his paternal blessings, and plan on organizing a cultural event and a fitting reception.

The Prelate commended the work of the organization and its members, and informed the representatives that the Pontifical Visit organizing committees will take into consideration their request upon review of the Pontifical schedule.